



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1673

ԱՄՓՈՓՈՒՄ


ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍ-  
ՏԱՆԵԱՑ ԱՌԱՋԵԼԱԿՈՆ ՄԲ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՈՐԾՈՒՐԵԱԼ ԴՈՒՏՐ 12 ԴՆԵՄՐԵՐ 1911

Ա. ԾՐՁԱՆ

Բ.-Գ. ՆԻՍ



1912

Տպարան ԿԵԼԻՔԵԽՈ.

ՊՈՍՏՈՆ

12509



12529

# ԱՄՓՈՓՈՒՄ

## ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ



ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍ-  
ՏԱՆԵԱՅ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ՄԲ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՈՒՄԱՐԵԱԼ յ'ՈՒՍՏԻ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

Ա. ՇՐՋԱՆ

ՆԻՍՏ Բ.

Ամերիկահայոց Ազգ. Կեդրոնական Վարչութեան  
Դիւանին հրաւերով (Տես Սահմ. Յոդ. 33) Երեսփոխա-  
նական Ժողովը գումարուեցաւ Նոյեմբեր 12-ի Կիրա-  
կին Ռւսրի մէջ:

Կեդրոնական Վարչութեան դիւանը ժողովը  
բացուած հոչակեց առաւօտեան ժամը 12ին։ Ժո-  
ղովին Նախագահ ընտրուեցաւ (Տես Սահմ. յոդ. 29)  
Վէսթ Հօպօքընի թեմակալ Հովիւ՝ Արժ. Տ. Պօղոս  
Վրդ. Շահնաղարեան։ Արժ. Հայրը ընդունելով նա-  
խագահութեան պաշտօնը՝ աղօթքով մը օրհնեց ժո-  
ղովին ներկայ գտնուող երեսփոխանները, և որուն  
յոտնկայս ունկնդրեցին ժողովականք։

Ժողովին ներկայ էին հետեւեալ պատ. երես-  
փոխանները։

Արժ. Տ. Պօղոս Վրդ. Շահնաղարեան, Տիարք  
Փառնակ Ա. Աղամեան, Սարդիս Ա. Հըդաղաշեան,

1673

Գէորգ Պ. Թովմաճանեան, Յակոբ Երիցեան, Յարութիւն Նաճարեան, Կիրակոս Սարգիսեան, Մաղաք Գ. Պէրպէրեան, Ռուբէն Հերեան, Նիկողոս Խաչմանեան, Գէորգ Տ. Մաղաքեան, Աւետիս Տէրօյենց, Կարապետ Մ. Չանգալեան, Մկրտիչ Գալայճեան, Հայկ Աըմսարեան, Գրիգոր Մահտեսի Խաչատուրեան, Գեղամ Միքրօյեան, Աւետիս Յակոբճանեան, Տիգրան Եաղճեան և Վարդան Տէր Դաբրիէլեան :

Բացակայ էին պաշտօնավարող Թեմակալ Հովկիւներէն Տ. Մատ. Քհյ. Մանիկեան, ինչպէս նաև Պրյք. Հմայեակ Ուղունեան, Խաչիկ Այլատ. Յ. Դանիէլեան և Յակոբ Սարաֆ:

Պրն. Խ. Աշոտ իր հիւանդութեան պատճառաւ Ժողովին ներկայ դանուելու անկարող ըլլալով նամակով իր քուէն զրկած էր, իսկ Պրն. Մելքոն Պէրածիկեան հեռագրաւ փոխանորդ նշանակած էր Տիար Մաղաք Գ. Պէրպէրեան, որ իր այս ձայնը փոխանցեց Պրն. Եաղճեանի, Ժողովին որոշումով :

Նիու Եօրբի պատ. Հոգաբարձութիւնը կիմացընէր Ժողովին, թէ իրենց նախկին երկու երեսփոխանները (Տիարք Յովհ. Հիւրմիւզ և Աղազար Քէշիշեան) հրաժարած ըլլալով՝ նոր երեսփոխաններ ընտրուած են Տիարք Ռուբէն Հերեան և Յակոբ Սարաֆ: Ժողովը հաստատեց սոյն ընտրութիւնը :

Վէսթ Հօպօքընի թեմին կողմէ երեսփոխաններ ընտրուած էին Պ. Պ. Կարապետ Չանգալեան, Հայկ Սըմսարեան և Մկրտիչ Պ. Գալայճեան, իսկ Լորէնսի թեմէն Պրն. Աւետիս Գ. Յակոբճանեան: Ժողովը սոյն ընտրութիւններն եւ հաստատեց :

Ժողովը անցաւ դիւանի ընտրութեան: Արժ. Նախագահը նշանակեց Յանձնախումբ մը, որ եռա-

պատիկ ցանկ մը կազմելով՝ ժողովին ներկայացուց, և որուն վրայ դադտնի քուէարկութիւն եղաւ և դիւաւի անդամ ընտրու եցան

Տիար Կարսապետ Մ. Զանգալ եան Առէնադէտ  
» Մադաֆ Գ. Պերպէրեան Առէնադէտէր

Դիւանին ընտրութենէն յետոյ՝ ժողովին օրակարգը պատրաստուեցաւ հետեւեալ կերպով:

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. — Կեդրոն. Վարչութեան ութամսեայ Տեղեկագրի ընթեցում:

2. — Գաֆթանեան Վարդապետի Փոխանորդութեան խնդիր:

3. — Առաջնորդական Տեղապահի խնդիր:

4. — Կարողիկոսական Պատգամաւորներու Ընտրութիւն:

5. — Վերաբննութիւն Սահմանադրութեան,

6. — Կրօնական Ժողովի պակաս անդամներու լրացում,

7. — Նոր խնդիրներ:

### ԼՈՒՇՈՒՄ ՀԱՐՑԵՐՈՒ

Ա. — Կեդրոնական Վարչութեան ատենադպիրը կարդաց Վարչութեան ութնամսեայ տեղեկագիրը, ուր մանրամասնորէն բացատրուած էին Վարչութեան բոլոր գործառնութիւններն ու ըրած կարգադրութիւնները: Ժողովը իր գոհունակութիւնն յայտնեց Վարչութեան՝ յոտնկայս շնորհակալութեամբ:

Բ. — Օրակարգի սոյն հարցին նկատմամբ Ժողովը միաձայնութեամբ հետևեալ բանաձևը քուէարկեց :

«Երեսփ. Ժողովս գումարուած յ՛Ուստր, 12 Նոյ. 1911, նախագահութեամբ Գեր. Տ. Պօղոս Վլդ. Շահնաղարեանի և մասնակցութեամբ Ամերիկահայ բոլոր թեմնոր օրինաւորապէս ներկայացնող քսան երեսփոխաններու, Հայր Դաֆթանեանի հակասահմանադրական ընթացքին նկատմամբ կեղրոն. Վարչութեան տեղեկագիրը կարդալով, յետ երկար խորհրդակցութեանց հետևեալ եղբակացութեան յանդեցաւ.

«Նկատելով որ՝ Գեր. Տ. Եղնիկ Եպիսկոպոսի թեմէս հեռանալովը առաջնորդական աթոռը թափուր կը մնար, և հոգելոյս Հայրապետի կողմէն այս կէտը նկատի առնուելով՝ նախորդ Երեսփ. Ժողովը հրաւիրելու դործը Ուստրի Հոգաբարձութեան յանձնուած էր.

«Նկատելով որ՝ նոյն ինքն Հայր Դաֆթանեան Փետր. 26ի Երեսփ. Ժողովին մէջ յատենի կը կրկնէր ինքնակոչ և հակասահմանադրական առաջնորդական փոխանորդութենէ իր հրաժարումը

«Նկատելով որ՝ իր անուանական պաշտօնին կոթնելով բացարձակ պատճառը դարձած է ներկայաննախանձելի և ամօթալի կացութեան եկեղեցական և կաղմակերպական գործերու, որու հետեւանքն եղած է ժողովրդին իր մայրենի եկեղեցիէն ուծացումը.

«Եւ վերջապէս նկատելով որ՝ Ազգ. Կեղրոն, Վարչութիւնը կանուխէն տեսնելով այս պարագաները, իրեն նկատել տուած էր իրաց այս վիճակը և

զգուշացուցած էր զինքը յազուտ վիճակիս և Ս. Ե. Կեղեցւոյ։

«Ժողովս որոշեց այս պարագան տեղեկացընել պատկանեալ իշխանութեանց և իրեն, թէ յէտ այսու Հայր Գաֆթանեան իսպառ դադրած և եւ իրաւում չունի ու եւ կերպով ներկայացնելու թեմս թէ իբրեւ Տեղապահ եւ թէ իբրեւ Փոխանորդ»։

Դ. — Ժողովս ի նկատի ունենալով որ Ար. Էջմիածնի Կաթողիկոսական Տեղապահը առարկած է Մուշեղ Եպիսկոպոսի առաջնորդական Տեղապահութեան մասին, և նկատելով որ առաջնորդական գործերը վարող Տեղապահի մը պէտքն ստիպողական ու անյետաձգելի է ներկայիս, միաձայն հաւանութեամբ առժամկայ առաջնորդական Տեղապահ ընտօքեց Երուսաղէմի միաբան և Վէսթ Հոպօքընի թեմակալ հովիւ Արժ. Տ. Պողոս Վրդ. Շահնազարեան, որ վարէ առաջնորդական գործերը մինչև Մուշեղ Եպիսկոպոսի առաջնորդութեան հաստատումը։

Հայր Շահնազարեան ընդունելով տեղապահութեան պաշտօնը՝ ուխտեց յարդել և հաւատարիմ մնալ Ամերիկահայոցս Սահմանադրութեան օրէնքներուն։

Դ. — Կաթողիկոսական պատգամաւորներու ընտրութեան հարցը սեղանի վրայ գտնով, թեր ու պէմ վիճաբանութիւններէ վերջ՝ հիմնուելով Սահմանադրութեանս յօդ. 25ի և 30ի տրամադրութեան վրայ, Ժողովը որոշեց եկեղեցական պատգամաւորն ընտրել Էջմիածինէն, իսկ աշխարհական պատգամաւորն ընտրել Ամերիկայէն։

Ժողովը գաղտնի քուէարկութեամբ և ձայներու միասնական հաւանութեամբ եկեղեցական լիազօր պատգամաւոր ընտրեց Ա. Էջմիածնի Կաթողիկոսա

կան Տեղակալ Ամեն. Տ. Գէորգ Ս. Արք. Սուրբն-  
եան, իսկ աշխարհական պատգամաւոր՝ Տիար Մա-  
ղաք Գ. Պէրպէրեան, որ քանի մը պատշաճ խոս-  
քերով իր չնորհակալութիւնն յայտնեց ժողովակա-  
նաց կողմէն իրեն եղած այս պատիւին համար:

Աշխարհական պատգամաւորի ճանապարհածախս  
քուէարկուեցաւ 500 տալէր, ի պահանջիլ հարկին  
պակասը պիտի հայթայթուի կեղըոն. Վարչութեան  
կողմէ:

Այս դումարը պիտի հայթայթուի հետևեալ  
կերպով,

Պութօն	§	30
Ուստ	"	50
Փրովիսէնս	"	50
Լին	"	25
Ֆրէզնօ եւ շրջ.	"	100
Վէսթ Հոոյօֆըն	"	50
Նիւ - բօրֆ	"	50
Լովէլ	"	30
Լորէնս	"	30
Նիւթըն Արոր Ֆոլս	"	30
Քլէվլէնս	"	30
Զլոհ	"	25
Լարի. Գումար	"	<hr/> 500

Ժողովն որոշեց Կաթողիկոսական պատգամա-  
ւորներու ընտրութիւնն հեռագրել էջմիածին Կա-  
թողիկոսական Տեղակալին, և իմացնել նոյնը Վա-  
շինկթօնի Ռուսական դեսպանին :

Ե. — Սահմանադրութեան վերաբննութիւնը յանձնուեցաւ Տօքթ. Փառնակ Աղամեանի, որպէս զի իրեն խորհրդակից առնելով երկու հմուտ անձեր՝ Սահմանադրութեան վրայ հարկ եղած վուրանութիւններն ընէ և ներկայացնէ նոյնը յաջորդ Երեսվիոխանական ժողովին ի ըննքնութիւն

Զ. Կրօնական ժողովոյ պակսած անդամներուն տեղ նոր ընտրութիւն կատարեց. Ընտրուեցան ներկայիս պաշտօնավարող եկեղեցականներէն Գեր. Տ. Մուշեղ Եպիս. Սերոբեան (թեմակալ հովիւ Պոստոնի) և Տ. Պօղոս Վլդ. Շահնաղարեան, և որոշեց մնացեալ պակսո թիւը լեցնել Ուստրի, Փըովիտէնսի և Նիու Եօրքի յաջորդ թեմակալ հովիւներով:

## ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Է. — Երեսվի. Ժողովոյ հանրադրութիւն մը մատուցուած էր կարգ յը Կիլիկիցի ազգայնոց կողմէն, որ կը չօշափիէր Ամերիկահայ առաջնորդական ծանօթ խնդիրը: Ժողովս նկատելով որ սոյն խընդիրը արդէն Երեսվի. Ժողովի և Կեղրոն. Վարչութեան կողմէ կրկնապէս ներկայացուած էր պատկանեալ բարձրագոյն իշխանութեանց, և կ'սպասւէր Ազգիս նորընտրելի Ընդհ. Հայրապետին տնօրինութեանը, որոշեց օրակարգի չանցնել զայն:

Ժողովին օրակարգը սպառած ըլլալով՝ կարդացուեցաւ Ժողովին արձանագրութիւնը, որը նոյնութեամբ վաւերացուելէ յետոյ՝ ատենապետը,

Նախագահ Հօր աղօթքէն վերջ, նիստը փակուած  
հոչակեց իրիկուան ժամը 8ին:

Ի Դիմաց Ամերիկահայ Երեսի. Ժողովոյ

Նախագահ

ՊՕՂՈՍ ՎՐԴ. ՇԱՀՆՐԶԱՐԵԱՆ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

ՄԱԴ. Գ. ՊԵՐԵՐԵԱՆ ԿԱՐ. Մ. ԶԱՆԳԱԼԵԱՆ

12 Նոյեմ. 1911

Աւագ, Մէսս.



Բ. ՆԻՍ (Ա. ՇՐՋԱՆ)

ՅՈՒԽԱԾ, 7 ՅՈՒԼԻՍ 1912

Երեսի. Ժողովը բացուեցաւ Տերության աղօթքով առաջօտեան ժամը 11ին, Ա. Փրկիչ Եկեղ. ազգ. ժողովասրահին մեջ, Երեսի. Ժողովոյ նախակին դիւանին կողմէն եւ նախագահութեամբ երիցազոյն հովիւ. Դեր. Տ. Պողոս Վրդ. Շահնազարեանի:

Ժողովին ներկայ կը գտնուիին պաշտօնավարող հույսներէն՝

Գեր. Տ. Մաւեղ Արքեպ. Սերոբեան, հովիւ. Պոստնի,

" " Արսէն Ծ. Վրդ. Վեհունի, հովիւ. Ռւսրի,

" " Պողոս Վրդ. Շահնազարեան, հովիւ. Վէսր Հօյօֆընի,

**Արժ. Տ. Տրիփոն Վեդ. Պիծակեան** (փոխանորդ Ֆրեզնօյի քեմակալ հովի Գեր. Վարդան Ծ. Վեդ. Գասպարեանի)

Իսկ աշխարհական երեսփոխանութեան՝ Տիարք Կարապետ Զանգալեան, Տօֆք. Փ. Աղամեան, Մկրտիչ Գալայնեան, Հայկ Սրբարեան, Մաղաք Գ. Պէրպէրեան, Գէորգ Պ. Թովմանանեան, Գեղամ Միհրօյեան, Աւետիսիս Տէրօյենց, Նիկողոս Խաչմանեան, Գէորգ Տ. Մաղաքեան, Գրիգոր Մարգարեան, Կիրակոս Սարգիսեան, Նշան Յովսէփեան, Սարգիս Աչըգպատեան, Յակոբ Երիցեան, Խաչատուր Ալեքս, Աւետիսիս Յակոբնանեան, Ղազար Տիրանեան և Գրիգոր Մհ. Խաչատուրեան:

### ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ԷԲ

1. — Նոր երեսփոխանութեան ընտրութեանց վաւերացում:
2. — Կիւանի ընտրութիւն:
3. — Հաւեարաւութիւն Կարողիկոսական պատգամաւորի:
4. — Ընթերցում Կարողիկոսական Մրգական Տեղակալի նաւելիին:
5. — Էջմիածնայ Մայր Արոռոյ հետ յարաբերութեանց նշում:
6. — Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն:
7. — Գագրանեանի խնդիր:
8. — Վերաբնինութիւն Սահմանադրութեան:

## ԼՈՒԾՈՒՄ ՀԱՐՑԵՐՈՒ

Ա. Փողովը հետևեալ նոր երեսփոխաններու ընարութիւնը վաւերացուց, հիմնուելով անոնց ընտրական տեղեկագրերուն օրինաւորութեանը վը բայ. Տիարք Գէորդ Պ., Թովմաճանեան՝ Ֆրէզնօէն (ինքը հրաժարած ըլլալով Ֆիլատէլֆիայի երեսփոխանութենէն), Գրիգոր Մարգարեան և Նշան Յովսէֆիեան՝ Ռւստրէն, Ղազար Տիրանեան՝ Նիւթըն Արըր Ֆօլսէն:

Բ. Դիւանի ընտրութիւն կատարուելով՝ ատենատպետ ընտրուեցաւ Տիար Կարապետ Զանդալեան, ատենադպիր՝ Մաղաք Գ. Պէրպէրեան:

Դիւանի կտղմութենէն վերջ՝ Գեր. Տ. Պօղոս Վրդ. Շահնազարեան առաջնորդական Տեղապահութեան պաշտօնէն հրաժարեցաւ, Մայր Աթոռոյ կողմէն առ այս ցոյց արուած լուսթեան հետևանքով: Փողով ընդունեց նորին Արժանապատւութեան հըրաժարականը և շնորհակալութիւն յայտնեց անորութամսեայ պաշտօնավարութեան համար:

Գ. Կաթողիկոսական պատգամաւոր Տիար Մաղաք Գ. Պէրպէրեան կարդաղ իր գրաւոր տեղեկագիրը, ուր մանրաամսնօրէն բացատրուած էր Ամերիկանայ միակ օրինաւոր պատգամաւորին մերժուելուն պարագաները: Փողովը՝ միաձայն հաւանութեամբ շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորին և անոր ներկայացուցած տեղեկագիրը գոհունակութեան քուէով պատուեց: Այս առթիւ Փողովը ի նկատի առնելով տարւոյս Յունիար 14ին Պոստօն գումարուած Հոգաբարձուական ներկայացուցչական Փողովին ուղղած բողոքը, ստորագրուած ինը թեմերու Հոգաբարձութիւններէ, ինչպէս նաև Ֆրէզ-

նօի Պատ . Հոգաբարձութեան բողոքը, որոշեց՝

Ամենայն Հայոց Հայրապետին պատշաճ լեզով  
մը ցտւ յայտնել կաթողիկոսական ընտրութեան օ-  
րինաւոր պատգամաւորի մերժումին առթիւ, և  
խնդրել, որ Ամերիկահայ Սահմանադրութեան որոշ  
յօդուածներու տրամադրութիւններու հիման վրայ  
Վեհափառ Հայրապետը կոնդակով մը հաստատէ Ե-  
րեսփ. Ժողովի պատգամաւորի ընտրութեան իրա-  
ւունքը, տպագայ ընարութեանց մէջ նոր կնճռո-  
տութիւններու տեղի չ'թողլու համար:

Դ. Կարդացուեցաւ Կաթողիկոսական Տեղակալ  
Ամեն . Սուրբնեան Սրբազնին 13 Հոկտ . (Հ . Տ .)  
և 1982 համար նամակը, ուղղուած Ամերիկահայոց  
Աղք . Կեդրոն . Վարչութեան , որոյ հիման վրայ  
հետևեալ բանաձեռ քուէարկուեցաւ ,

«Ներակա առնելով առաջնորդական խնդրոյ մասին  
Տեղակալին 13 Հոկտ . 1911 եւ 1982 համար սպաշտուա-  
գիրը, որով խնդրոյն ներառումը կը յետաձգէր ընտե-  
լի Վեհափառ Կաթողիկոսին, ժողովս միաձայնութեանք  
կ'որոշէ դիմել Նորին Ս . Օծութեան եւ իր այդ խո-  
սումը յիշեցնելով այս մասին վերջնական ժորինութեան  
փութացումը խնդրել:»

Ե . — Ամերիկահայ Սահմանադրութեան համա-  
ձայն էջմիածնի Մայր Աթոռին հետ թիմիս յարա-  
բերութիւնները ճշդելու համար՝ որոշուեցաւ ըն-  
դարձակ աեղեկագիր մը պատրաստել և դրկել Վեհ .  
Կաթողիկոսին , ուր մանրամասնօրէն բացատրուած  
ըլլան ամերիկայի առաջնորդութեան հետ կապ ու-  
նեցող բոլոր խնդիրները , և առ այս խնդրով Հայ-  
րապետին շուտ ընդ փոյթ տնօրինութիւնը :

Վերոյիշեալ տեղեկագիրը պատրաստելու համար  
ընտրուեցաւ Յանձնախումբ մը , Գեր . Մուշեղ Ար-

բեպիս . Սերոբեանէ , Արսէն Վլդ . Վեհունիէ , Տքթ . Փ . Աղամեանէ և Մաղաք Գ . Պէրպէրեանէ : Տեղեկագիրը պիտի ստորագրուի բոլոր երեսփոխաններէն , և անոր մէկ օրինակը պիտի զրկուի Պոլսոյ Աղդ . Պատրիարքարանը :

Զ . — Կեղըռն . Վարչութեան Տնտեսական ժողովը հաւաքարար հրաժարական մատոյց ժողովին , որ ընդունեց այդ հրաժարականը , ու որոշուեցաւ Վարչութեան նոր ընտրութիւն կատարել : Ժողովին ատենապետը չորս հոգիէ բաղկացեալ յանձնախումբ մը նշանակեց (Արսէն Վլդ . Վեհունի , Տիարք Կիրակոս Սարգիսեան , Գրիգոր Մարգարեան և Գեղամ Միքրոյեան ) եռապատիկ ցանկի մը պատրաստութեան համար , որոնք ժողովին ներկայացուցին ցանկը հետևեալ անուններէն կազմուած :

Տիարք Աւետիս Սելեան , Տօքթ . Ա . Այվազեան , Աւետիս Տէրոյենց , Գէւորգ Թովմաճանեան , Գրիգոր Մարգարիան , Մաղաք Գ . Պէրպէրեան , Գեղամ Միքրոյիան , Կարապետ Գարակիւլեան , Կարապետ Զանդալեան , Մհ . Սարգիս Աչըգպաշեան , Կիրակոս Սարգիսեան , Նիկողոս Խաչմանեան , Տօքթ . Փ . Աղամեան , Մինաս Արօյեան և Մկրտիչ Աճէմեան :

Գաղտնի քուէարկութեամբ Տնտեսական ժողովի անդամ ընտրուեցան՝ Տիարք Գէորգ Պ . Թովմաճեան (21 քուէ) , Մաղաք Գ . Պէրպէրեան (21 քուէ) , Տօքթ . Փ . Աղամեան (19) , Գեղամ Միքրոյեան (11) , և Մինաս Արօյեան (10) : Յաջորդ տռաւելադոյն քուէ սաացողներն են՝ Տիարք Նիկողոս Խաչմանեան (7) , Գէորգ Տ . Մաղաքեան (7) , Կարապետ Զանդալեան (4) և Աւետիս Սելեան (4) :

Իսկ Կրօն . Ժողովի անդամ ընտրուեցան՝ ըստ Նոյ . 12ի (1911) Երեսփ . Ժողովոյ տուած որոշման՝ Գեր . Մուշեղ Արքեպիս . Սերոբեան , Արսէն

Շ. Վրդ. Վեհունի, Վարդան Շ. Վրդ. Գասպարեան, Պօղոս Վրդ. Շահնազարեան և Տրիփոն Վրդ. Պիծակեան:

Վերոյիշեալ Կեղրոնական Վարչութեան պաշտօնը պիտի տեսէ երկու տարիէն քիչ մը աւելի, լրացնելու իր նախորդին պակաս շրջանը:

Է.—Տնտեսական Ժողովոյ նախկին գանձապետը Վարչութեան հաշիւները ներկայացնելով՝ տեսնըւեցաւ թէ՝ Վարչութիւնը ընդհ. մուտք ունեցած է § 410, իսկ ելք § 555 (Ելքի բաժնին մէջ է կաժողիկոսական պատգամաւորին տրուած 500 տալերի ճանապարհածախսը), որով § 145 գումարի բաց մը կը մնար: Ժողովը հաստատելով և վաւերացնելով հաշիւները, յանձնարարեց նորընտիր Կեղրոն. Վարչութեան վերոյիշեալ բացը գոցելու համար իւրաքանչիւր թեմէ պղտիկ գումար մը պահանջել:

Ը. — Գաֆթանեանի խնդրոյն վրայ Ժողովը թեր ու դէմ վիճաբանելէ ետք՝ հետեւեալ բանաձեռքուէարկեց:

«Այսօր Ուստրի մէջ գումարուած ամերիկայի Հայ. Սր. Եկեղեցւոյ Բնդհ. Երեսփոխանական Ժողովս, կազմուած պաշտօնի վրայ գտնուող չորս հովիւներէ և 11 թեմեր ներկայացնող 19 աշխարհական լիազօր ներկայացուցիչներէ, որ ըստ Սահ. 25րդ յօդուածի Ամերիկայի մէջ գտնուող Հայ. Առաքելական Եկեղ. միակ ներկայացուցչական Մարմինն է, իր սեղանին վրայ ունեցած և լուծած կարգ մը Եկեղեցական խնդիրներու կարգին Սուրբ Փրկիչ Եկեղեցւոյ պատ. Հոգաբարձութեան Յուլիս 4 թուակիր պաշտօնագրէն ցաւով ու զարմանքով տեղեկացաւ, թէ Տ. Պօղոս Վրդ. Գաֆթանեանիրը առաջնորդ դատ բացած է իր (Հոգաբարձութեան) դէմ, իրեն իրաւասութեան տակ առնելու համար Ուստրի Սր. Փրկիչ Եկեղեցին և անոր յարակից տուները (61—63 Laurel St.), ինչպէս նաև գո-

հացում ստանալու կարգ մը անտեղի պահանջներու:

« Ժողովս հիմնուելով Ամերիկայի Հայ Ս. Եկեղեցւոյ հոգևոր կառավարութեան համար գծուած Սահմանադրութեան վրայ, կը յայտնէ թէ՝ Տ. Պօղոս Վրդ, Գաֆթանեան այդ Սահմանադրութեան Ղրդ յօդուածին համեմատ ընտրելու իրաւունք ունեցող մարմինէն երբէք առաջ. տեղապահ չէ ընտրուած: Իսկ իր ունենալ յաւակնած պաշտօնն ալ այս Ժողովին կողմանէ Նոյեմ. 12ի (1911) նիստին մէջ արդէն մերժուած է բայ Սահ. Յօդ Յօդ:

« Արդ, Ժողովս ներկայ որոշումով միանգամ ընդ միշտ կը մերժէ Տ. Պօղոս Վրդ, Գաֆթանեանի Ամերիկանայ եկեղեցական կազմակերպութեան միջամտելու համար ունեցած իր յաւակնութիւնը, ինչպէս նաև բոլորովին անիրաւ և անտեղի կը գտնէ անոր Ռւստրի Հոգաբարձութեան դէմ բացած դատը: »

Ժողովը որոշեց վերոյիշեալ բանաձեռ կցել Վեհ. Հայրապետին դրկուելիք տեղեկագրին:

Թ. — Սահմանադրութեան վերաբննութեան, ինչպէս նաև Ամերիկայի թեմը էջմիածնայ իրաւասութենէն հանել և Մայր Աթոռոյ հաճութեամբը Պօլսոյ Պատրիարքարանին կցելու հարցերը սեղանի վրայ մնացին և տնօնք լուծումը Ժողուեցաւ Երես. Ժողովոյ յաջորդ նիստին:

Օրակարգի խնդիրներն սպառած ըլլալով՝ Ժողովին ատենագրութիւնը կարդացուեցաւ և միաձայնութեամբ վաւերացուելէ վերջ՝ նիստը աղօթքով մը փակուեցաւ իրիկուան ժամը 7ին:

Ի Դիմաց Ամերիկանայ Երեսի. Ժողովոյ

Նախագահ

ՊՕՂՈՍ ՎՐԴ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ԱՏԵՆԱՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

ՄԱԴ. Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ԶԱՆԳԱԼԵԱՆ